

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿՐԿԱԾ ԿԱՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՐՎՈՂ ԵԶԱԿԻ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿՐԿԱԾ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՐՎՈՂ ԵԶԱԿԻ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետություն ներկրված կամ Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ դրվող եզակի տրանսպորտային միջոցների համապատասխանության գնահատման կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել, որ միայն Հայաստանի Հանրապետության տարածքում եզակի տրանսպորտային միջոցները շրջանառության մեջ են դրվում սույն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ մինչև 2022 թվականի հունվարի 1-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿՐՎԱԾ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՐՎՈՂ ԵԶԱԿԻ
ՏՐԱՆՍԴՈՐԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

1. Սույն կանոնները տարածվում են Հայաստանի Հանրապետություն
ներկրված կամ Հայաստանի Հանրապետությունում շրջանառության
մեջ դրվող եզակի տրանսպորտային միջոցների նկատմամբ:
2. Սույն որոշմամբ սահմանված եզակի տրանսպորտային միջոց
հասկացությունը մեկնաբանվում է «Անվավոր տրանսպորտային
միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային
միության տեխնիկական կանոնակարգի և ԳՕՍՏ 33670-2015
միջպետական ստանդարտին համապատասխան:
3. Սույն կանոններին համապատասխան ներկրված կամ եզակի
արտադրված տրանսպորտային միջոցների համապատասխանության
գնահատման ժամանակ տրամադրվող տրանսպորտային միջոցի
կառուցվածքի անվտանգության մասին վկայականի համապատասխան
դաշտում լրացվում է տրամադրման համար անհրաժեշտ արտակարգ
օպերատիվ ծառայությունների կանչի սարքավորումով (համակարգով)
համալրված լինելու բացակայության մասին տեղեկատվություն կամ
սույն որոշման վավերապայմանները: